

ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ


2021

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը



Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդու ենք հաջողություն:

1 Երկրների, տարածաշրջանների բնությունն ու հասարակությունն իրենց բաղադրիչներով համալիր ուսումնասիրում է.


- 1) Երկրաբանությունը
- 2) Երկրաձևաբանությունը
- 3) Երկրագրությունը
- 4) Երկրաբնապահպանությունը

2 Կողմնորոշված կողմնացույցի մազնիսական սլաքը հորիզոնի ո՞ր կողմն է ցույց տալիս.

- 1) արևմտյան
- 2) հյուսիսային
- 3) արևելյան
- 4) հարավային

3 Նկար 1.-ում Զ տառով նշված կետի աշխարհագրական կոորդինատները որք ՞նք են:

- 1) հս. լ. 20° արմ. ե. 20°
- 2) հվ. լ. 20° արմ. ե. 20°
- 3) հս. լ. 20° արլ. ե. 20°
- 4) հվ. լ. 20° արլ. ե. 20°



4 Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) մուսասների առաջացումը
- 2) ժամերի տարրերությունը
- 3) երկնքի ամպամածությունը
- 4) պասսատների առաջացումը

5 Եթե տեղագրական քարտեզում հորիզոնականները խիտ դասավորություն ունեն, ապա այդ տեղամասում.

- 1) լեռնալանջը մեղմաթեք է
- 2) լեռնալանջը զառիթափ է
- 3) լեռնալանջը բուսազուրկ է
- 4) լեռնալանջը բացակայում է

6 1 : 7 000 000 մասշտարի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 8 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

- 1) 56 կմ
- 2) 560 կմ
- 3) 5600 կմ
- 4) 5,6 կմ

7 Բնութագրումով որոշել Երկրի շերտը.

Երկրի ամենավերին և ամենաքարակ շերտն է: Այն կազմված է համեմատարար թերթն ապարներից: Այդ շերտն է.

- 1) ստորին միջնապատյանը
- 2) երկրակեղեց
- 3) վերին միջնապատյանը
- 4) Երկրի միջուկը

8 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Շատ գեյզերներ կան Կամչատկա թերակղզում:
- 2) Երկրի ընդերքում այն տեղը, որտեղ առաջանում են ապարաշերտերի կտրուկ տեղաշարժեր, կոչվում է երկրաշարժի օջախ:
- 3) Գեյզերների տաք ջրերը մարդիկ օգտագործում են ջերմոցները և բնակարանները տաքացնելու համար:
- 4) Հանգած հրաբուխներ են Վեզուվը և Կրակատուն:

9 Ի՞նչ զագ է արտազատվում լուսասինթեզի ժամանակ.

- 1) թթվածին
- 2) ազոտ
- 3) օքնն
- 4) ածխաթթու զագ

10 Ո՞ր գոնայում են ապրում փիղը և ընձուղտը.

- 1) սավաննա
- 2) տափաստան
- 3) խառը անտառ
- 4) անապատ

11 Գետի անկումը 800 մ է, երկարությունը՝ 200 կմ: Որքա՞ն է գետի միջին թեքությունը.

- 1) 4 մ/կմ
- 2) 6 մ/կմ
- 3) 8 մ/կմ
- 4) 2 մ/կմ

12 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հասարակածային գոտու գետերը հորդանում են ամռանը:
- 2) Սառցադաշտային սնում ունեցող գետերը հորդանում են աշնանը:
- 3) Միջերկրածովյան կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
- 4) Մուսսոնային կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:

13 Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այս բնական զոնան տարածվում է մեծամասամբ հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու նրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Ծառեր զրեթե չեն աճում, և տարածված են մամուռներ ու քարարուներ: Ո՞ր բնական զոնան է.

- 1) սավաննա
- 2) տունդրա
- 3) տայգա
- 4) սառցային

14 Տափաստանների բնական զոնան հիմնականում ո՞ր հողերի վրա է տարածվում.

- 1) կարմրագորշ
- 2) դարչնագույն
- 3) կարմրադեղին
- 4) սևահողերի

15 Ո՞ր լեռն է ամենաբարձրը Անտարկտիդայում.

- 1) Էլբրոս
- 2) Էրեբոս
- 3) Վինսոն
- 4) Մոնթան

16 Ո՞ր պնդումն էճիշտ.

- 1) Մուրեյ գետը սկիզբ է առնում Էյր լճից:
- 2) Ավստրալիայի ներքին շրջաններում տեղումներն առատ են:
- 3) Ավստրալիայում սառցադաշտեր չկան:
- 4) Մեծ ջրաժան լեռնաշղթան ունի հրաբխային ծագում:

17 Հարավային Ամերիկայի արևմտյան ափով ո՞ր ծովային հոսանքն է անցնում:

- 1) Գվիանական
- 2) Բրազիլական
- 3) Ֆոլկենդյան
- 4) Պերուական

18 Ըստել Հարավային Ամերիկայի հարթավայրերի և դրանց բնութագրիչների համապատասխանությունների ճիշտ շարքը.

- | | |
|---------------|---|
| ա. Պատագոնիա | 1. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի արևելք, առավելապես տարածվում են խոնավ հասարակածային անտառներ: |
| բ. Բրազիլական | 2. Սարահարթ է, կիսաանապատ, տարածվում է բարեխառն գոտում: |
| գ. Լա Պլատայի | 3. Ընդարձակ հարթավայր է, կան պլատֆորմի կարծր բյուրեղային հիմքի մերկացած տեղամասեր՝ վահաններ, տարածվում են սավաննաներ՝ կամպոս: |
| դ. Ամազոնի | 4. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի հարավ, նրա միջով է հոսում Պարանա գետը: |
- 1) ա-3, բ-1, գ-2, դ-4
 - 2) ա-2, բ-3, գ-4, դ-1
 - 3) ա-3, բ-2, գ-4, դ-1
 - 4) ա-2, բ-3, գ-1, դ-4

19 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հյուսիսային Ամերիկայի փոքր մասը հարավային կիսագնդում է:
- 2) Հյուսիսային Ամերիկան Հարավային Ամերիկային միանում է Պանամայի պարանոցով:
- 3) Հյուսիսային Ամերիկան Եվրասիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 4) Հյուսիսային Ամերիկան ամբողջությամբ արևմտյան կիսագնդում է:

20 Ո՞ր գույգն է սխալ.

- 1) Կալիֆոռնիա թերակղզի — Կալիֆոռնիական ծոց
- 2) Ալյասկա թերակղզի — Ալյասկայի ծոց
- 3) Ֆլորիդա թերակղզի — Ֆլորիդայի նեղուց
- 4) Լաբրադոր թերակղզի — Լաբրադորի նեղուց

21 Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Աֆրիկայի հիմքում ընկած է Գոնդվանա հնագույն խոշոր ցամաքի մասը կազմող Աֆրիկական պլատֆորմը:
- 2) Աֆրիկայի մակերևույթում տիրապետում են սարահարթերը:
- 3) Աֆրիկայում ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հասարակածային գոտում:
- 4) Կապի և Դրակոնյան լեռները հին, քայլայված լեռներ են:

22 Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կլիման ձևավորող գլխավոր գործոնը ունի էֆեկտ:
- 2) Մայրցամաքի վրա ձևավորվում է մթնոլորտային ճնշման 4 մարզ՝ երկու բարձր, երկու ցածր:
- 3) Կանարյան սառը հոսանքը մեծ դեր է խաղացել Սահարա անապատի առաջացման գործում:
- 4) Արևմուտքում գտնվող Կամերուն գործող հրաբուխը մայրցամաքի ամենախոնավ շրջանն է:

23 Եվրասիայի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.


- 1) Տարածքում ձևավորվում են օդային զանգվածների բոլոր չորս հիմնական տիպերը:
- 2) Տարածքի մեծ մասի կլիման ձևավորվել է բարեխառն օդային զանգվածների ազդեցությամբ:
- 3) Մայրցամաքի հյուսիսն ամբողջ տարին անտարկտիկական ցուրտ և չոր օդային զանգվածների ազդեցության տակ է:
- 4) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային կիսագնդի բոլոր կլիմայական գոտիներում:

24 Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևոր իրադարձությունը չէ.

- 1) Ավստրո-Հունգարիայի փլուզումը
- 2) ԱՄՆ-ի կազմավորումը
- 3) Օսմանյան կայսրության փլուզումը
- 4) ԽՍՀՄ-ի կազմավորումը

25 Դիագրամում տրված է երկրագնդի բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների: Ո՞ր բարձրության գոտուն է համապատասխանում Ա տառը.

- 1) 200-500 մ
- 2) 500-1000 մ
- 3) 1000-2000 մ
- 4) մինչև 200 մ



26 Պետության բնակչության թիվը 200 մլն մարդ է, զյուղական բնակչության թիվը՝ 50 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի:

- 1) 50%
- 2) 40%
- 3) 25%
- 4) 75%

27

Ո՞ր պնդումն է սիսալ.

- 1) ՀՏ-ի տարածքային միավորները վերազգային ընկերություններն են:
- 2) ՀՏ-ն մինչև 19-րդ դարի վերջը ուներ միակենտրոն բնույթ, այժմ
բազմակենտրոն է:
- 3) ՀՏ-ի զարգացման փուլերից է արդյունաբերականը:
- 4) Համաշխարհային տնտեսությունն (ՀՏ) աշխարհի բոլոր երկրների ազգային
տնտեսությունների փոխկապակցված ամբողջությունն է:

28


Համաշխարհային տնտեսության ճյուղերից ո՞րն է առաջատար աշխատողների թվով.

- 1) ծառայությունների ոլորտը
- 2) զյուղատնտեսությունը
- 3) տեղեկատվական ոլորտը
- 4) արդյունաբերությունը

29

Ո՞ր պնդումն է սիսալ.

- 1) Թեթև և սննդի արդյունաբերության տեղաբաշխումը համատարած է,
քանի որ բոլոր երկրներում էլ կա:
- 2) Թեթև և սննդի արդյունաբերությունը հիմնականում թողարկում է սպառման
արտադրանք:
- 3) Թեթև և սննդի արդյունաբերությունը տնտեսության նորագույն ճյուղերն են:
- 4) Համաշխարհային թեթև և սննդի արդյունաբերության հիմնական հումքային
բազան զյուղատնտեսությունն է:



քարտեզ 1

30 Ո՞ր պետությունն է քարտեզ 1-ում նշված Ա տառով.

- 1) Քենիա
- 2) Չաղ
- 3) Լիբիա
- 4) ՀԱՀ

31 Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1-ում նշված Բ տառով.

- 1) Կահիրե
- 2) Անտանանարիվու
- 3) Ռաբաթ
- 4) Աղջև Աբեբա

32

Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սիսալ*.

- 1) Բնակչության մեծ մասը խոսում է թյուրքական լեզվախմբի մեջ մտնող լեզուներով:
- 2) Բարձր է բնակչության միջին խտությունը:
- 3) Գերիշխող կրոն է մահմեդականությունը:
- 4) Բոլոր երկրները չունեն ելք դեպի ծով:

33

Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *Ճիշտ*.

- 1) Այստեղ են առաջացել քրիստոնեություն և բուդդայականություն կրոնները:
- 2) Երկրների մեծ մասի բնակչության կազմում գերակշռում են կանայք:
- 3) Բարձր է բնակչության բնական աճը:
- 4) Տարածաշրջանի մեջ են մտնում Արաբական և Հինդուստան թերակղղիները:

34

Ո՞ր մշակաբույսի աճեցմամբ է Խոսլիան աշխարհում առաջատար.

- 1) սուրճի
- 2) խաղողի
- 3) ցորենի
- 4) կակաոյի

35

Ո՞ր պետությունները Լատինական Ամերիկայում չեն.

- 1) Կանադան և Շվեյցիան
- 2) Կուբան և Ուրուգվայը
- 3) Արգենտինան և Չիլին
- 4) Կոլումբիան և Պերուն

36

Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սիսալ*.

- 1) Աշխարհում առաջատարներից է այումինի հումքի՝ բոքսիտների արդյունահանմամբ և արտահանմամբ:
- 2) Երկրում մշակվող գլխավոր հացահատիկային մշակաբույսը ցորենն է:
- 3) Բնակչությունը հիմնականում կենտրոնացած է հարավարևմտյան շրջաններում:
- 4) Գառան մսի արտադրությամբ աշխարհում առաջինն է:

37

«Օգտակար հանածո—հանքավայր» գույզերիցընտրել *սիսալ*.

- 1) պղինձ — Անդերի լեռներ
- 2) զազ — Հյուսիսային ծով
- 3) երկաթ — Պարսից ծոց
- 4) քարածուխ — Ռուրի ավազան

38

Օուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ձիշտ.

- 1) Բնակչության թվաքանակով աշխարհի երրորդ պետությունն է Չինաստանից և Հնդկաստանից հետո:
- 2) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:
- 3) Երկրի տարածքում բնակվող մեծաթիվ ժողովուրդներից են չուվաշները:
- 4) «Ժողովրդագրական պայքառունը» կանխելու նպատակով երկիրը վարում է բնակչության աճի կրծատման ժողովրդագրական քաղաքականություն:

39

Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սիսալ.

- 1) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 2) Բոլոր երկրներն ունեն ելք դեպի Համաշխարհային օվկիանոս:
- 3) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են քաղաքային բնակավայրերը:
- 4) Հարուստ է սառցադաշտային ծագման լճերով:

40

Բնութագրումով որոշել պետությունը.

Եվրոպական այս պետության անունը թարգմանաբար նշանակում է սաոցէ երկիր: Սակայն այն բացառիկ հարուստ է զեյզերներով: Երկրաշերմային էներգիան լայնորեն կիրառվում է բնակարանների և շերմոցների ջեռուցման համար: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Ֆինլանդիան
- 2) Իսլանդիան
- 3) Նորվեգիան
- 4) Իռլանդիան

41


Հայկական պար լեռնաշղթայի վրա է.

- 1) Քարի լիճը
- 2) Կապուտան լիճը
- 3) Պարզ լիճը
- 4) Գայլատու լիճը

42

Ո՞ր լեռնաշղթան ՀՀ հարավում չէ:

- 1) Վայքի
- 2) Վիրահայոց
- 3) Մեղրու
- 4) Զանգեզուրի



Քարտեզ 2

43 Քարտեզ 2-ում Ծաղկունյաց լեռնաշղթան ո՞ր տարով է նշված.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա

44 Քարտեզ 2-ում Սպանդարյանի ջրային էլեկտրակայանը ո՞ր տարով է նշված.

- 1) Ե
- 2) Է
- 3) Ը
- 4) Զ

45 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Քաջարան և Ախրալա քաղաքները զարգացել են իրենց մոտակայքում գտնվող հանքային հարստությունների առկայության և շահագործման շնորհիվ:
- 2) Մեծամորը և Ծաղկաձորը միազործառութային քաղաքներ են:
- 3) Գյումրի և Վանաձոր քաղաքները վարչական, գիտակրթական ու մշակութային կենտրոններ են, արդյունաբերական, երկաթուղային ու ավտոխճանական ձանապարհների հանգույց:
- 4) Արտաշատ և Արմավիր քաղաքները ցեմենտի արտադրության կենտրոններ են:

46 ՀՀ ո՞ր բնակավայրը առողջարանային չէ:

- 1) Ազարակը
- 2) Դիլիջանը
- 3) Արգնին
- 4) Հանքավանը

47 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) ՀՀ տնտեսությունն ունի բազմաճյուղային կառուցվածք:
- 2) ՀՀ ՆԱ-ի կառուցվածքում ամենամեծը տրանսպորտի և կայու բաժինն է:
- 3) ՀՀ-ն անցումային տնտեսություն ունեցող երկիր է:
- 4) ՀՀ տնտեսությունը մեծապես կախված է ներմուծվող էներգակիրներից:

48 Երկաթուղային կայարաններ են.

- 1) Մարալիկը և Արթիկը
- 2) Գավառը և Մարտունին
- 3) Վայքը և Եղեգնաձորը
- 4) Գորիսը և Սիսիանը

49 Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մարզի զարգացման գործում մեծ դեր ունի առողջարանային տնտեսությունը:
- 2) Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասն արոտավայրեր են:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են թռչնաբուծությունը և խոզաբուծությունը:
- 4) Ցածրադիր գոտու ոռոգելի հողերում տարածված է խաղողագործությունը և պտղաբուծությունը:

50 Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) պղնձաձուլությունը
- 2) քիմիական արդյունաբերությունը
- 3) պանրի արտադրությունը
- 4) գինու-կոնյակի արտադրությունը

51 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Զերմոցային էֆեկտի ազդեցության մեծացումը պայմանավորված է վթանողութում մեթանի և ածխաթթու զազի քանակի ավելացմամբ:
- 2) Օգնային շերտի քայլայումը բնորոշ է միայն բարեխառն գոտուն:
- 3) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառն Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:
- 4) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:

52

Էլեկտրակայանների տեսակներից ո՞րն է ամենաշատն աղտոտում մթնոլորտը.

- 1) ջերմային
- 2) հողմային
- 3) արևային
- 4) ջրային

53

Հնդկերքի ռեսուրսների որոշ տեսակներ խնայելու արդյունավետ միջոցառում է.

- 1) շահագործվող հանքավայրերում պոչամբարների ստեղծումը
- 2) մետաղների փոխարինումը սինթետիկ նյութերով
- 3) փակ եղանակով արդյունահանման փոխարինումը բաց եղանակով
- 4) անընդհատ նոր հանքավայրերի շահագործումը

54

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կոնսումենտները սննդառության շղթայի այն օդակն են, որոնք անօրգանական նյութերից սինթեզում են օրգանական նյութեր:
- 2) Արգելոցը ցամաքի կամ ջրային տարածքի տեղամաս է, որտեղ պահպանվում են բնական միջավայրի կամ կենդանի օրգանիզմների մեկ կամ մի քանի տեսակներ:
- 3) Շրջակա միջավայրի մոնիթորինգը բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումն է, զնահատումն ու վերահսկումն է:
- 4) Անտառապատ տարածքների կրծատման հետևանք է թթվային անձրևների առաջացումը:

55

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Պարենային հիմնախնդիրը բնորոշ է մեծամասամբ զարգացած երկրներին:
- 2) Զարգացող երկրների մեծ մասի տնտեսության մեջ գերակշռողը ծառայությունների ոլորտն է:
- 3) Սովյալների և թերանվողների գոտին ձգվում է առավելապես հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնություններում:
- 4) Մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչներն են երկարակեցությունը, կրթվածությունը և կենսամակարդակը:

56

Գրել այն ապարների համարները, որոնք ունեն հրային ծագում.

- | | |
|--------------|-------------|
| 1) գնեյս | 5) կվարց |
| 2) զրանիտ | 6) օբսիդիան |
| 3) բազալտ | 7) կավիճ |
| 4) կերակրիառ | 8) տուֆ |

57

Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել անձրևային սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|------------|--------------|
| 1) Պարանա | 5) Սիրդարյա |
| 2) Մեկոնգ | 6) Կոնգ |
| 3) Մակենզի | 7) Կոլումբիա |
| 4) Օրինոկո | 8) Օք |

58

Տրված են ծովային հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------|---------------|
| 1) Մոզամբիկի | 5) Կուրոն Սին |
| 2) Ալյասկայի | 6) Սումալիի |
| 3) Գվինեական | 7) Բենգալյան |
| 4) Գվիանական | 8) Գոլֆստրիմ |

59

Գրել այն լեզվահամբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաբնուանիքի մեջ.

- | | |
|---------------|----------------|
| 1) իրանական | 5) ռոմանական |
| 2) սեմական | 6) գերմանական |
| 3) հայկական | 7) թյուրքական |
| 4) սլավոնական | 8) քարթվելական |

60

Գրել այն երկրների համարները, որոնք մերձծովային են.

- | | |
|--------------|--------------|
| 1) Շվեյցարիա | 5) Բելգիա |
| 2) Մոնղոլիա | 6) Մոլդովա |
| 3) Բուլղարիա | 7) Հունգարիա |
| 4) Ալժիր | 8) Շվեդիա |

61

Գրել ՀՀ այն կեկտրակայանների համարները, որոնք ջրային չեն.

- | | |
|-------------|-------------|
| 1) Տաթևի | 5) Քանաքեռի |
| 2) Շամբի | 6) Արգնիի |
| 3) Սևանի | 7) Մեծամորի |
| 4) Վանաձորի | 8) Չորագետի |

62

Հայկական լեռնաշխարհի տրված գետերի համարները դասավորել դրանց հոսքի ուղղության արևմուտքից արևելք, հյուսիսից հարավ, հարավից հյուսիս հաջորդականությամբ.

- | | | |
|----------|----------|-------------|
| 1. Ճորոխ | 2. Արաքս | 3. Ախուրյան |
|----------|----------|-------------|

63 Տրված են տարբեր բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրեր: Դասավորել բարձրության նվազման կարգով.

1. սարահարթ 2. ցածրավայր. 3. բարձրավայր 4. դաշտավայր

64 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 38° , արլ. ե. 147° : Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:

65 Լեռան ստորոտին մթնոլորտային ձնշումը 680 մմ է, իսկ օդի ջերմատիճանը՝ $+25^{\circ}\text{C}$: Լեռան զագաթին օդի ջերմատիճանը $+10^{\circ}\text{C}$ է (հաշվարկը կատարել 5°C -ով): Որոշել մթնոլորտային ձնշումը լեռան զագաթին:

66 Ինչքա՞ն էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 3 տ նավթի այրումից (ջերմային գործակիցը՝ $1,5$):

67 Պետության բնակչության թիվը 1 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25 000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ: Որոշել բնակչության բնական աճի գործակիցը (%):

68 Երկրի նավթի պաշարները կազմում են 6,8 մլրդ տ, տարեկան հանույթը՝ 170 մլն տ: Որքա՞ն է ռեսուրսապահովածությունը:

69

Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Ավտոճանապարհային ցանցի համար բնորոշ են արագընթաց լայնահուն մայրուղիները:
- 2) Բեռնաշրջանառության մեջ մեծ է գետային տրանսպորտի բաժինը:
- 3) Արտահանման մեջ զերակշռում են մեքենաներն ու սարքավորումները:
- 4) Տնտեսության զարգացման մակարդակով առաջինն է Արևելյան Ասիայում:
- 5) Թույլ է ապահովված հումքի և վառելիքի սեփական պաշարներով:
- 6) Արդյունաբերության առաջտար ճյուղը թերև արդյունաբերությունն է:

70

ՀՀ անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Խոշոր եղերավոր անասնաբուժությունը մյուս ճյուղերի համեմատ խիստ անհամաշափ է տեղաբաշխված:
- 2) Անասնապահության համախառն արտադրանքի մեծ մասը բաժին է ընկնում մանր եղերավոր անասնապահությանը:
- 3) Խողաբուժությունն առավել զարգացած է Գեղարքունիքի և Շիրակի մարզերում:
- 4) Թոշնաբուժական ֆարբիկաներն առավելապես տեղաբաշխված են խոշոր քաղաքների կամ արդյունաբերական կենտրոնների մոտակայքում:
- 5) Ոչխարաբուժությունն առավել զարգացած է նախալեռնային և լեռնային շրջաններում:
- 6) Արոտավայրերի գերբեռնվածությունը և գերարածեցումը բնապահպանական հիմնախնդիրներ են առաջացնում: